Հայագիտությունը Հեմարանում մի գլխով վեր կանգնեց, երբ նրանով զբաղվեց և Հիմնադրեց ասորագիտների գաստավանգումը իր ձեռքն առավ Մ. Աբեղյանը։ Հայագետների մի բանի սերունդ գաստիարակելու հետ միասին նա կատարեց բանասիրական բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք մեծ ազդեցություն ունեցան Հայագիտության մեջ։

Հայագիտության զարգացումը շարունակվեց նաև Հեմարանի գոյության վերջին տարիներին։ 1914—1915 ուսումնական տարվանից այնտեղ պաշտոնավարում էին Աշոտ Հովհաննիսյանը, Եվսեբիոս Տեր-Գոգոսյանը, Գոգոս Մակինցյանը, Ստեփան Մալխասյանցը և ուրիշներ։ Նրանցից Հատկապես Աշոտ Հովհաննիսյանը և Գ. Մակինցյանը գաստավանգման ընթացքում վեր էին Հանում գաստմական անցյալի իցիալիստական մեկնաբանման արատավոր կողմերը և ցույց տալիս Հասարակության սոցիալ-գաստակարգային առանձնահատկությունները, գաստակարգերի մեջ գոյացած անցյալը և գաստակարգային երկու տարբեր կուլտուրաների Հակամարտությունը։ Ամա Մեն Աշ. Հովհաննիսյանը 1916—1917 ուսումնական տարվա իր կազմած ծրագրերի Հիմքում դնում է գրեթե. «նախնական կամանիզմ, ուսումնասիրության ապրյուրները։ Նախնական մարդկության տեխնիկան, գոյության կռիվն այս շրջանում։ Հավելյալ աշխատանքի բացակայությունը այս շրջանում։ Նախնական մարդկության Հասարակական գիմիրենցիացիայի Հարցերը և գրանց բացակայությունը, Հասարակական մտայնության ծագումն ու զարգացումը և այլն։ Այս շրջանում պատմության և մանավորապես Հայագիտության գաստավանդումը մտավ զարգացման նոր փուլի մեջ։ Նոր գաստաբաները ցույց էին տալիս, որ Հայ ժողովրդի կուլտուրան, նրա կրած ու թողած ազդեցությունները պետք է գիտել և քննել Հասարակական զարգացման պրոցեսների ընթացքի մեջ։ Գիտական գաստաբանների վերջին սերունդը չէր սահմանափակվում Հեռավոր անցյալի քննությամբ, անդրադառնում էր նաև Հայ ժողովրդի պատմության մոտիկ ու ժամանակակից Հարցերին։

Հեմարանի գոյության վերջին տարիներին այնտեղ ուսանել են նաև Ա. Միքայելյանը, Լ. Մելչանը, Ա. Խանդյանը, Ն. Ակրտումյանը, Հ. Կոստանյանը, Ս. Գանիելյանը, Ա. Տոսմբոլյանը և այլ նշանավոր դեմքեր։

1916 թ. դեկտեմբերի 20-ին Հեմարանում տեղի է ունեցել գիտական Հանձնաժողով, որը պետք ստեղծեր նաև իր Հրատարակությունը։ Հանձնաժողովի նախագահ է ընտրվում Գ. Լավանդյանը, քարտուղար՝ Աշոտ Հովհաննիսյանը, անդամներ՝ Լևոն Գյանջեցյանը, Մենեքրին Տեր-Հակոբյանը, Գր. Պապիանցյանը և ուրիշներ։ Հանձնաժողովը հիմնադրում է նաև ազգագրական Հանդես։ Հանդեսի տոմարի Համար որոշված էր նվիրել առանձնաՀատուկ տեղիներ վերջի մեջ գաղթի Հետ կապված նյութերի ուսումնասիրությանը։ Հիշյալ նպատակով որոշակի թեմաների մշակման Համար Հրավիրված էին Ռ. Քորամանյանը, Լևոն Մանդյանը, Արսեն Ղրամյանը, Գագիկ Տեր-Մկրտչյանը և ուրիշներ։ Խնդիր էր դրված լուսաբանել Տաճկահայաստանի անտառությունը, Հարստությունները, արմատի մի շարք Հարցեր, ուսումնասիրել ժողովրդի սովորությունները, տարազը, արհեստները, կենցաղը, ավանդությունները, ժողովրդական ստեղծագործությունը և այլն։ Այս աշխատանքները, սակայն, մնացին անավարտ, որովհետև 1917 թ. դեկտեմբերի 21-ին Հեմարանը փակվեց։

Հոյլատանում ամենաուկան կարգեր Հաստատվելուց անմիջապես հետո Երևանում հիմնադրվեց Պետական Համալսարանը, որի առաջին դասախոսները թեմում էին Գեորգյան Հեմարանի նախկին ուսուցիչներից շատերը։

Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԼԵՀԱՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XVI—XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Լեհաստանի հայերի քաղաքական իրավունքներից առավել կարևորը ինքնավարության իրավունքն էր, որից նրանք օգտվեցին սկսած Գալիցիա-Վոլինյան իշխանության ժամանակաշրջանից մինչև XVIII դարի վերջը, այսինքն՝ մինչև Ռեչ Պոսպոլիտայի անկումը։

Միջնադարում Լեհաստանում ինքնավարության իրավունքը տրվում էր քաղաքատեր-ֆեոդալի կողմից՝ նրա ռիրտպետության սահմաններում գտնվող յուրաքանչյուր առանձին քաղաքի համար։ Այդ պատճառով էլ ֆեոդալական մասնատվածության պայմաններում խոսք չէր կարող լինել կենտրոնացված և միասնական ինքնավարության մասին։ Նույն ձևով էլ յուրաքան-

---

* ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆոնդ 312, թղթ. 34, ցանկ. 15, թուղթ 71։

չյուր քաղաքի հայկական համայնք ստանում էր ինքնավարություն, որի իրավասությունը սահմանափակված էր սոսկ տվյալ համայնքի շրջանակներով։

Լեհահայ գաղութի պատմության վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ գաղութի հասարակական-քաղաքական կյանքում նրա դերը չափազանց մեծ էր։ Ինչպես Դալիցիայի իշխանները, այնպես էլ լեհ մագնատներն ու թագավորները իրենց քաղաքներում ընդունելով հայ գաղթականներին՝ բնակություն հաստատելու համար նրանց հատկացնում էին քաղաքի որոշակի շրջաններ։ Այդտեղ էլ ստեղծվեցին հայկական ազգային համայնքները։ Համատեղ կյանքը տեղի հայ բնակչության մոտ դնում էր որոշակի ընդհանուր խնդիրներ, որոնց լուծումը պահանջում էր միավորել համայնքի բոլոր անդամների ջանքերը։ Այս խնդիրները ամենից առաջ լուծում էին դնում համայնքի ընդհանուր ժողովներում։ Մի քանի հին փաստաթղթերից երևում է, որ նման ժողովներում ընդհանուր քննարկման էին դրվում, օրինակ, հասարակական բարեգործության, էջմիածնի կաթողիկոսությանը և լեհ իշխանավորներին ուղարկվող նվերների ու հաստույթների, եկեղեցիների, վանքերի, դպրոցների և հասարակական այլ շենքերի կառուցման կամ վերանորոգման համար անհրաժեշտ միջոցներ հավաքելու հարցերը[1]։ Այդ նույն ժողովներում էլ առաջադրվում էին ինքնավարության հիմնարկների անդամների թեկնածությունները[2]։

Հիմնականում գրաղված լինելով Լեհաստանի արևելյան առևտրով, համայնքի անդամները միմյանց հետ կապված էին պրոֆեսիոնալ և տնտեսական ընդհանուր շահերով։ Բա, անտարակույս, ամրապնդում էր հայ համայնքի ուժերը և հնարավորություն տալիս ավելի համարձակորեն պաշտպանելու իր իրավունքները լեհական քաղաքային իշխանությունների և ընդհանրապես քաղաքային պատրիցիատի մշտական ոտնձգություններից։ Ահա թե ինչու հայ բնակչության իրավունքների սահմանափակման իրենց քաղաքականությունը վարելիս քաղաքային իշխանությունները պայքարի սլաքն ուղղում էին առաջին հերթին հայ համայնքների դեմ։ Նրանք ձգտում էին ամեն կերպ խափանել այնտեղ զարգացող հասարակական-քաղաքական կյանքը։ 1562 թ. Լվովի քաղաքային մագիստրատը հայերին նույնիսկ ընդհանրապես արգելեց համայնքի ժողովներ գումարելը։ Հայերի իրավունքների նման ոտնահարությունը չէր կարող չառաջացնել տեղի հայերի դայրույթը։ Համայնքի անունից թագավորին ուղարկված բազմաթիվ բողոքները ստիպեցին լեհական իշխանություններին վերականգնելու Լվովի հայկական համայնքի այդ իրավունքը։ Հետաքրքիր է նշել, որ այդ դրությունը այնքան լուրջ բնույթ էր ընդունել, որ թագավորից բացի դրանով զբաղվեց նաև լեհական սեյմը։ 1563 թ. հունվարի 19-ի իր որոշմամբ սեյմը Լվովի մագիստրատին պարտավորեցրեց ոչ միայն չխոչընդոտել այդ ժողովների անցկացմանը, այլև անհրաժեշտության դեպքում քաղաքապետության (ռատուշի) շենքում սենյակ տրամադրել նման ժողովներ գումարելու համար[3]։

Մեծ էր հայ համայնքի նշանակությունը նաև քաղաքի հասարակական կյանքում։ առանց նրա մասնակցության չէին վճռվում համաքաղաքային շատ հարցեր, այդ թվում՝ քաղաքի տնտեսության, թաղամասերի բարեկարգման, պաշտպանունակության ամրապնդման, հասարակական կարգի պահպանման վերաբերյալ հարցերը։ Լվովի քաղաքային խորհրդի՝ 1662 թ. սահմանած կարգի համաձայն համաքաղաքային ժողովներում, ուր քննարկվում էին վերը նշված հարցերը, առաջին տեղը և ձայնը պատկանում էր քաղաքային լավագույնին[4], երկրորդ տեղն ու ձայնը՝ հայ համայնքի ներկայացուցիչներին («հայ ժողովրդի ավագանուն»), երրորդ տեղն ու ձայնը՝ վաճառականներին, չորրորդը՝ արհեստավորներին, հինգերորդը՝ «ռուս ազգինը» (այսինքն՝ ուկրաինացիներին) և վերջին վեցերորդ տեղն ու ձայնը ռեգենտին (regens communitatis—այսպես կոչված բառասունաղբարաց ղեկավարին)[5]։

Ինչ Պոսպոլիտայի արևմտաուկրաինական քաղաքներում հայ համայնքները նման ազդեցության հասել էին ներքին կազմակերպվածության շնորհիվ։ Նրանց ազդեցության ուժեղացման գործում քիչ դեր չէր խաղում նաև հայերի տնտեսական ուժը։ Լեհաստանի արևելյան առև-

---

[1] O. Balzer, Sądownictwo ormiańskie w średniowiecznym Lwowie, Lwów, 1909, էջ 45։

[2] Ուկրաինական ՍՍՌ Լվովի պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 52, ցուցակ 3, գ. 54, էջ 1104։

[3] Բիշոֆ, Լեհահայոց հին իրավունքը, էջ 33։

[4] Լեհական քաղաքային դատարան։

[5] Տե՛ս „Учреждения Западной Украины до восстановления ее в едином Украинском Сов. соц. государстве", Львов, 1955, էջ 25։

տուրը, ինչպես նաև արհեստի առավել եկամտաբեր ճյուղերը (ոսկերչություն, կաշեգործություն և այլն) լեհահայ գաղութի տնտեսական բարգավաճման աղբյուրներն էին։ Սակայն դա ամենևին չէր նշանակում, թե բոլոր լեհահայերը հարուստ վաճառականներ ու արհեստավորներ էին, որոնք գտնվում էին նյութական բացառիկ ապահով պայմաններում։

Լեհաստանի հայ բնակչության հիմնական զանգվածի սոցիալական վիճակը գրեթե ոչնչով չէր տարբերվում լեհական և ուկրաինական քաղաքաբնակ ստորին խավերի (pospólstwo) վիճակից։

Յուրաքանչյուր հայ համայնք իրենից ներկայացնում էր առանձին ինքնավարություն, ուստի և այդ ինքնավարությունների միջև գոյություն ունեին կազմակերպչական բնույթի տարբերություններ։ Մի քաղաքում ինքնավարության հիմնարկությունը բաղկացած էր վոյտից և 12 անգամներից (ավագներից), իսկ ինքը՝ այդ հիմնարկությունը կոչվում էր հայկական դատարան (Լվով), մի այլ քաղաքում այն բաղկացած էր վոյտից և 8 անգամներից (լավնիկներից) և կոչվում էր հայկական մագիստրատ (Կամենեց-Պոդոլսկ), երրորդում՝ քաղաքագլխից (բուրգոմիստր) և 4—6 անգամներից (Ջամոստիե) և այլն։

Հայ ինքնավարության հիմնարկությունների կազմակերպչական ձևերի հարցը որոշվում էր քաղաքաքաղաքացիական կոդեքսից։ Այս իմաստով թերևս բացառություն են կազմում Լվովի, Կամենեց-Պոդոլսկի և մի քանի այլ քաղաքների հայկական ինքնավարության հիմնարկները, որոնք առաջ էին եկել գեռևս Գալիցիա-Վոլինյան իշխանության գոյության շրջանում։ Նշված այս քաղաքներում ուշ միջնադարում լայնորեն օգտագործվող հին հայկական անվանումներն ու տերմինները թույլ են տալիս ենթադրելու, որ այդտեղի հայկական ինքնավարության հիմնարկությունների կազմակերպման ժամանակ օգտագործվել է նաև միջնադարյան հայկական քաղաքների ինքնավարության փորձը։ Այսպես, Լվով քաղաքի հայ ինքնավարության ղեկավարությունը մինչև 1686 թ. կոչվում էր «հայոց ավագանի» կամ «հայ ավագներ»[6], իսկ հայոց վոյտի տեղակալը Լվովում և Կամենեց-Պոդոլսկում կոչվում էր երեցվոխան[7]։ Հետաքրքիր է, որ Լվովի հայոց հոգևոր դատարանի սենյակը կոչվում էր «խուց», թեև այն գտնվում էր ոչ թե եկեղեցում, այլ քաղաքապետության շենքում[8]։

Հայ ժողովրդի միջնադարյան պատմությունից հայտնի է, որ X—XII դարերում, այսինքն՝ հենց այն շրջանում, երբ Հայաստանում ծայր առան զանգվածային գաղթերը, հայկական մի շարք քաղաքներում գոյություն ունեին ինքնավարություններ։ Օրինակ, Անիում այդ ժամանակ գոյություն ուներ քաղաքային ինքնավարություն, որտեղ ղեկավար դեր էր խաղում այսպես կոչված «ավագների խորհուրդը»։ Այս խորհուրդը կազմվում էր «ի ծերոց քաղաքին» կամ «յաւագաց քաղաքին»[9]։ Հայտնի է նաև, որ նշված ժամանակաշրջանում հայկական քաղաքներում առաջ եկան աշխարհիկ դատարաններ[10], որոնք քննում էին գույքային, պայմանագրային, ժառանգական, ինչպես և սոսկ քրեական գործեր[11]։ Սակայն տիրող համընդհանուր անօրինականության և օտարազգի զավթիչների վարած ազգային հիմնարկությունների դաժան հալածման պայմաններում աշխարհիկ այս դատարանները դադարեցին գոյություն ունենալուց։ Պահպանվեցին միայն եկեղեցուն կից հոգևոր դատարանները։ Այժմ շափազանց դժվար է որոշել, թե որտեղ էին տեղավորված այս դատարանները։ Գուցե դրանք գործել են հենց այն խցերում, ուր ապրում և աշխատում էին հայ հոգևոր դատավորները՝ եպիսկոպոսները։ Գուցե հենց այստեղից էլ հոգևոր դատարանի այդ «խուց» անունը անցել է Լեհաստան և այնտեղ ևս կիրառություն գտել։ Մի բան պարզ է սակայն, որ «խուց» անունը բոլորովին չէր բռնում քաղաքապետարանի այն սենյակին, ուր նիստեր էր ունենում տեղի հայոց հոգևոր դատարանը։ Եվ հենց այս անհա-

---

6 Նշված թվականին, բեղառաչելով հայ ավագանու խնդրանքին, Յան Սոբեսկի թագավորը նրան իրավունք տվեց կրելու «հայ ժողովրդի դատավորներ» անունը։ Հայոց ավագանու կարծիքով դա պետք է բարձրացներ իր հեղինակությունը ինչպես հայ համայնքում, այնպես ամբողջ քաղաքում։

7 Antoni I., Nowe opowiadanie historiczne, Lwów, 1883, էջ 113։

8 T. Gromnicki, Ormjanie w Polsce, ich historja, prawa i przywileje, Warszawa, 1889, էջ 94։

9 Տե՛ս պրոֆ. Բ. Ասատրյան, Քաղաքային վարչությունը և ինքնավարությունը միջնադարյան Հայաստանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3—4, էջ 64։

10 Նույն տեղում, էջ 94։

11 Ա. Սամվելյան, Դատարանակազմությունը և դատավարությունը ըստ Մխիթար Գոշի, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1908, № 3, էջ 173։

մտպատասխանություններ. մեր կարծիքով, ավելի շատ խոսում է հոգուտ այն ենթադրության, որ բուն Հայաստանում հոգևոր դատարանները, հավանարար, ոչ մեծ գործեր քննարկելիս իրենց դիստերը գումարել են իցերում։

Այսպիսով, կան որոշ հիմքեր ենթադրելու, որ իրենց ինքնավարության հիմնարկությունների ստեղծման ժամանակ արևմտա-ուկրաինական քաղաքների հայերը օգտագործել են միջնադարյան Հայաստանի համապատասխան փորձը։ Ազգային ոգուն և սկզբունքներին հայ հիմնարկությունների համապատասխանելու մասին համանման մի միտք է արտահայտել յեհ պատմաբան Չեսլավ Խովանեցը։ Ստանիսլավի հայ ինքնավարության որոշակի արտաքին արտահայտությունները,—դրում է նա,—ինչպես վոյտը, լավնիկները, խորհուրդը (rada), ավագները—հայերը վերցրել են մագդեբուրգյան իրավունքից։ Սակայն դա ոչ թե ստանիսլավյան նորամուծություն էր, այլ հայոց իրավունքի տարրերի դարավոր հասարակական կյանքի արտահայտություն մագդեբուրգյան քաղաքային հիմնարկությունների ֆոնի վրա, հիմնարկություններ, որոնց գոյության պայմաններում էլ ձևավորվեցին հայկական կազմակերպության հատուկ ձևերը, որոնք սրտաթուստ հիշեցնում էին մագդեբուրգյան, բացի ներքուստ՝ իր ամբողջ ոգով, հասկացողություններով և կոչմամբ համապատասխանում էին հայոց իրավունքին[12]։

Չնայած այն բանին, որ Խովանեցը սխալմամբ «ավագներ» հասկացողությունը ևս վերագրում է մագդեբուրգյան իրավունքին, նա բավականին ճիշտ է բնութագրում հայկական ինքնավարության կազմակերպչական սկզբունքների առնչությունը գերմանական քաղաքային իրավունքին։ Հայ ինքնավարության վրա գերմանական իրավունքի ազդեցությունը, որի մասին խոսում է Խովանեցը, մեծ չափով ուժեղացավ XVI դարի վերջերին և առանձնապես XVII դարում։ Ինչպես հայտնի է, կաթոլիկ ռեակցիան ընդհանուր հարձակում սկսեց լեհահայերի կրոնական և սոցիալ-քաղաքական իրավունքների վրա։ Պատահական չէ, որ այդ շրջանում առաջացած հայկական բոլոր ինքնավարությունները (Զամոստիե, Հոլոշով և այլն) գրեթե նույնությամբ կրկնում էին գերմանական իրավունքի՝ քաղաքային ինքնավարության հայտնի սկզբունքներն ու ձևերը։

Հայկական ինքնավարության գլուխ կանգնած էին հայ վոյտն ու դատարանի կամ մագիստրատի անդամները (ավագներ, խորհրդականներ, լավնիկներ և այլն)։ Քաղաքատեր ֆեոդալի կամ թագավորի հատուկ արտոնագրի (przywilej) համաձայն այս ղեկավար օրգանը հայկական ստատուտի հիման վրա (որը Մխիթար Գոշի Դատաստանագրքի լեհահայոց տարբերակն էր) վարում էր հայերի դատական գործերը։

Ինքնավարության ղեկավար օրգանները կազմվում էին համայնքներում անցկացվող ամենամյա ընտրությունների միջոցով։ Լեհ թագավորների և առանձին իշխանների օրենսդրական ակտերում կարելի է հանդիպել նույնիսկ հատուկ կանոնների, որոնք վերաբերում էին հայկական համայնքներում ընտրությունների անցկացման կարգին։ Այսպես, 1563 թ. Պետրկովյան սեյմը Լվովի լեհական մագիստրատին պարտավորեցրեց կատարել թագավորական նախորդ կարգադրությունները և ուշադիր վերաբերմունք ցույց տալ տեղի հայ ինքնավար օրգանների ընտրություններին։ Սեյմը վերստին հաստատեց հայերի իրավունքը՝ ընտրելու իրենց 12 ավագներին և սահմանեց, որ այդ ավագները կարող են ընտրված համարվել միայն այն դեպքում, երբ հայոց եկեղեցում թագավորին հավատարմության երդում կտան[13]։

1576 թ. մայիսի 26-ին հաստատելով Կամենեցի հայերի իրավունքներն ու արտոնությունները, Ստեֆան Բատորի թագավորը միաժամանակ նշեց, որ հայերը պետք է ամեն տարի մի որոշակի ամիս և օր հավաքվեն և ընդհանուրի համաձայնությամբ ընտրեն իրենց վոյտին ու երդվյալ լավնիկներին[14]։ Թագի մեծ գետման Յան Զամոյսկու 1589 թ. արտոնագրի համաձայն Զամոստիե քաղաքի հայ ինքնավար օրգանները ևս պետք է ընտրվեին ամեն տարի. ընտրություններին պետք է մասնակցեր հասարակ ժողովուրդը (pospolstwo)։ Ինչպես բոլոր նույնատեսակ արտոնագրերում, այստեղ ևս հատուկ նշված է, որ ընտրությունները պետք է տեղի ունենան քաղաքատեր-ֆեոդալի ներկայացուցիչների (սուբ-գելեգատների) հսկողության ներքո[15]։

---

[12] Cz. Chowaniec, Ormianie w Stanisławowie w XVII i XVIII wieku. Stanisławów, 1928 (աշխատություններում էջերը չեն համարակալված)։

[13] S. Baracz, Rys drzejów ormiańskich. Tarnopol, 1869, էջ 110—111։

[14] Նույն տեղում, էջ 94։

[15] M. Zakrzewska-Dubasowa, Organizacja gminy ormiańskiej w Zamościu w XVI—XVII wieku, Rocznik lubelski, III, Lublin, 1960, էջ 69—70։

Լեհական բարձր օրենսդրություն. սակայն, սահմանում էր ընտրությունների միայն ընդհանուր կարգը։ Ինչ վերաբերում է մանրամասն կանոններին, ապա դրանք մշակվում էին ինքնավարության օրգանների դարավոր պրակտիկ գործունեության ընթացքում։ XVII—XVIII դարերում ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործում սկսեց մեծ դեր խաղալ այսպես կոչված 40-ի կոլեգիան կամ, ինչպես հայկական աղբյուրներում է հիշատակվում՝ «քառասունաղրարքը»։ Ռուս Պոսպոլիտայում այս ինստիտուտի առաջացումը կապված է XV—XVI դդ. լեհական քաղաքներում ազգայական հակասությունների ուժեղացման հետ։ Քաղաքային վարչությունները, որոնք ամբողջությամբ գտնվում էին խոշոր վաճառականության ձեռքում, չէին ներկայացնում արհեստագործների, մանր առևտրականների և բնակչության ստորին խավերի շահերը։ Այս վերջինների մղած պայքարի հետևանքով էլ ստեղծվում բուն լեհական, ապա և արևմտաուկրաինական քաղաքներում ստեղծվեցին այս կոլեգիաները, որոնք գործում էին քաղաքային խորհուրդներին կից և մասնակցում քաղաքի կառավարմանը[16]։

Քառասունաղրարաց հայկական կոլեգիաները, որոնք բաղկացած էին առևտրականներից և արհեստավորներից, յուրաքանչյուր 6 շաբաթը մեկ գումարում էին իրենց հավաքները և քննարկում համայնքի կյանքին վերաբերող հրատապ հարցեր։ Կոլեգիան ամեն տարի ընտրում էր իր երկու պետերին՝ մարշալներին, որոնք, որպես համայնքի ֆինանսական ներկայացուցիչներ, մտնում էին հայկական մագիստրատի կազմի մեջ[17]։ 40-ի կոլեգիայի նշանակությունը հատկապես մեծանում էր հայոց ինքնավարության օրգանների ընտրությունների ժամանակ XVI—XVII դդ. Ռաշկով քաղաքում ընտրությունների ժամանակ հայոց վոյտի թեկնածությունը առաջադրվում էր այդ կոլեգիայի կողմից[18]։ Կամենեց-Պոդոլսկում XVII դարում կոլեգիան նույնիսկ հատուկ կանոններ էր մշակել ընտրությունների վերաբերյալ։ 1634 թ. դեկտեմբերի 7-ի նրա որոշման մեջ մասնավորապես ասվում էր. «Որպեսզի այսուհետև վոյտի ընտրությունը տեղի ունենա ամեն տարի սուրբ Մաթևոսի տոնի նախօրյակին։ Որպեսզի (վոյտը) ընտրվի մարշալիկի, քառասունաղրարաց և համայնքի հիսուն անդամների կողմից։ Այս հիսուն հոգին պետք է առանձնացվեն հիշյալ մարշալիկի և քառասունաղրարաց կողմից առաքինի, ազնիվ և մշտապես բնակված մարդկանցից և ռամիկներից։ Որպեսզի մշտապես չբնակեցված մարդիկ ընտրություններին չմասնակցեն»[19]։ Այս որոշումը խստիվ արգելում էր մեկ անձնավորության կողմից հայկական մագիստրատում երկու պաշտոն զբաղեցնելը։ Զամոստիե քաղաքում վոյտի թեկնածությունը առաջադրվում էր նախկին մագիստրատի լավնիկների թվից։ Եթե նախկին վոյտը չէր վերընտրվում, ապա մագիստրատի նոր կազմում նա զբաղեցնում էր լավնիկի պաշտոն[20]։ Իշխան Ենջեյ Պոտոցկու 1677 թ. հունվարի 14-ի արտոնագիրը Ստանիսլավի հայերին իրավունք էր տալիս ամեն տարի ընտրել իրենց վոյտը։ Սակայն վստահություն վայելող վոյտը առանց նոր ընտրություններ անցկացնելու երկար տարիներ զբաղեցնում էր իր պաշտոնը, օրինակ՝ Կասպեր Թումանովիչը, Քշիշտոֆ (Խաչատուր) Յակուբովիչը, Նիկոլայ Վարդանովիչը և ուրիշներ (XVIII դ. առաջին կես), որոնցից յուրաքանչյուրը ավելի քան տասը տարի զբաղեցրել է վոյտի պաշտոնը։

Հայկական բոլոր համայնքներում ընտրությունների օրը համարվում էր ազգային տոն։ Եկեղեցում կատարված հանդիսավոր պատարագից հետո ընտրողներն ուղղվում էին դեպի քաղաքապետարան։ Այնտեղ հայկական նախկին վարչությունը հաշիվ էր տալիս համայնքի միջոցների ծախսման և եկամուտների մասին։ Եկեղեցու դրամական գործերի մասին զեկուցում էր վոյտի տեղակալ երեցփոխանը կամ այսպես կոչված պրովիզորը, ապա ընտրում էին վոյտին և խորհրդականներին։ Նորընտիր վոյտը անպայման հաստատվում էր քաղաքատիրոջ ներկայացուցիչների կողմից։ Այսպես, օրինակ, 1634 թ. Զամոստիե քաղաքի հայկական վոյտ Գարրիել Արևովիչին հաստատեցին սուրդելեկատներ Յակուբ Ուրիշը և Յան Իվաշկևիչը[22]։ Ընտրություններից հետո հայոց վարչության նորընտիր կազմը երդում էր տալիս և իր նախորդներից ընդունում վարչության սնդուկը, ուր պահվում էին լեհ թագավորներից կամ իշխաններից ստացած

[16] „История Польши", под ред. В. Л. Королюка и др., М., 1956, էջ 160։

[17] Cz. Chowaniec, նշվ. աշխ.։

[18] Ս. Բժշկյանց, Ճանապարհորդություն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 120։

[19] „Книга каменец-подольского магистрата". 4442, год 1712—1719, лист 176. Архив Юго-Западной России, ч. V, т. I, էջ 150—152։

[20] M. Zakrzewska-Dubasowa, նշվ. աշխ., էջ 73—74։

[21] Cz. Chowaniec, նշվ աշխ.։

[22] M. Zakrzewska-Dubasowa, նշվ. աշխ., էջ 71—72։

արտոնագրերն ու հրովարտակները, վարչության դատական գրքերը, ինչպես նաև վարչության ամբողջ արխիվը՝ կնիքի հետ միասին[23]։

Վոյտը և վարչության մյուս անդամները պետք է լինեին ազնիվ և նվիրված քաղաքացիներ։ Արքությամբ պահպանեին իրենց համար սահմանված կանոնները։ Այդ կանոնների խախտման դեպքում համայնքը կամ 40-ի կոլեգիան հարց էին հարուցում խախտողին պատասխանատվության ենթարկելու մասին։ Օրինակ, գոյություն ուներ մի սովորություն, որի համաձայն հայոց դատավորը պետք է անպատճառ բեխեր ունենար։ Մի փաստաթղթից պարզվում է, որ այդ սովորությունը չպահպանելու համար հայ դատավորները նույնիսկ պատժվում էին։ Այսպես. 1712 թ. մայիսի 21-ին Նիկոլայ Ակսենտովիչը (հավանաբար 40-ի կոլեգիայի մարշալիկը) Կամենեցի հայ բատասունաղարաց անունից դատական գործ է բացում հայոց դատավոր Թոմաս Բոգդանովիչի նկատմամբ՝ վերոհիշյալ սովորությունը խախտելու համար։ Մեղավոր ճանաչված դատավորը ստիպված է լինում վճարել 100 գրիվնա տուգանք[24]։ Մի այլ դեպքում (1717 թ. հունվարի 28) Կամենեցի 40-ի կոլեգիան վճռականորեն հանդես է գալիս հայոց մագիստրատի այն որոշման դեմ, որի համաձայն Ավգուստին Փիրսարդովիչը հրավիրվում էր վերստին զբաղեցնելու խորհրդականի իր պաշտոնը։ 40-ի կոլեգիան իր բացասական վերաբերմունքը նշված անձնավորության նկատմամբ հիմնավորում է նրանով, որ համընդհանուր վտանգի պահին Փիրսարդովիչը հանդես բերելով վախկոտություն, ինքնակամ կերպով դեն էր նետել իր պարտականությունները և փախել քաղաքից։ 40-ի կոլեգիան պահանջում է Փիրսարդովիչի առջև դնել նույն այն պայմանները, որոնք դրվում էին ցանկացած «օտար» մարդու առջև, այսինքն՝ նա պետք է դեռ ընդունվեր համայնքի մեջ, և նոր միայն, եթե նրա թեկնածությունը կառաջադրվեր ու ընտրություններ ժամանակ կստանար անհրաժեշտ քանակությամբ ձայներ, կարող էր զբաղեցնել խորհրդականի պաշտոն։

Ընտրություններն ընթանում էին հայկական պատրիցիատի ուժեղ ճնշման ներքո։ Լվովի հայերի մի բողոքագրից երևում է, թե այդ վերնախավը ինչպես էր ընտրությունների ժամանակ իր կամքը թելադրում ամբողջ համայնքին։ «Նրանք (այսինքն՝ հայ ավագանին—Մ. Հ.) նախ իրենց տներում պայմանավորվում են իրենց հարազատների և մերձավորների հետ, ապա իրենք էլ առաջադրում են իրենց թեկնածուներին՝ չթույլատրելով նույնիսկ դրանք քննարկելու։ Եթե որևէ մեկը հանդես է գալիս դրանց դեմ, նրանք հարձակվում են այդ մարդու վրա և սկսում ծեծել։ Մի անգամ ընդհանուր ժողովում ծեծեցին բարի մեշչանին Զախարիաշ Ավեդիկովիչին այն պատճառով, որ նա համաձայն չէր իրենց հետ։

Փաստեր կան նաև այն մասին, որ երբ հայ վերնախավին չէր հաջողվում անցկացնել իր թեկնածուներին, նա դիմում էր ընտրությունների արդյունքների կեղծմանը[25]։ Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ ինքնավարության օրգաններում գտնվում էին հարուստ վաճառականների և մասամբ արհեստավորների ձեռքում։ Զամոստիեի հայկական մագիստրատի արձանագրություններից (XVI դ. վերջ, XVII դ. առաջին կես) երևում է, որ տեղի վոյտությունը մշտապես պտտվել է մի քանի մեծահարուստ ընտանիքների ներկայացուցիչների (Կիրկորովիչների, Բալյովիչների, Ալթունովիչների, Օվանիսովիչների, Բարթաշովիչների և մյուսների) ձեռքում[28]։

Բոլոր թեկնածությունները պարտադիր կերպով համաձայնեցվում էին քաղաքատեր-ֆեոդալների հետ։ Եթե վերջինիս չէին բավարարում ընտրությունների արդյունքները, նա չեղյալ էր համարում դրանք և նշանակում նոր ընտրություններ[29]։

Այսպիսով, վերը շարադրվածից հետևում է, որ լեհահայերի ինքնավարության հիմքը արևմտուկրաինական քաղաքներում գոյություն ունեցող առանձին հայկական համայնքներն էին, որ համախմբված էր տեղի գրեթե ամբողջ հայ բնակչությունը։ Լինելով լեհական ֆեոդալական հասարակության բաղկացուցիչ մասը, հայ համայնքը զարգանում էր այն նույն հասարակական օրինաչափություններով, որոնք հատուկ էին լեհական և արևմտուկրաինական քաղաքային համայնքներին։

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

---

[23] M. Zakrzewska-Dubasowa, նշվ. աշխ., էջ 73։
[24] Архив Юго-Западной России, ч. V, т. I, էջ 241—242։
[25] Նույն տեղում, էջ 263—264։
Ուկր. ՍՍՌ Լվովի կենտր. պետ. արխիվ, ֆ. 52, ցուցակ 3, գ. 341, էջ 101։
[27] Cz. Chowaniec, նշվ. աշխ.։
[28] M. Zakrzewska-Dubasowa, նշվ. աշխ., էջ 78—79։
[29] Архив Юго-Западной России, ч. V, т. I, էջ 55։